Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

15.01.2019թ

ք.Գյումրի

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Շիրակի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր՝ Հ.Բադիշյանս ուսումնասիրելով 15.01.2019թ վերսկսված թիվ 03544528, 03544999 և 03544995 կատարողական վարույթների նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Շիրակի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից «13» հուլիս 2018թ. տրված թիվ ՇԴ/2762/02/17 կատարողական թերթի համաձայն պետք է Պատասխանողներ՝ ԱՋ Սեդա Ռոբերտի Ղազարյանից, Սամվել Արմենակի Սերոբյանից և Արմենակ Սամվելի Սերոբյանից համապարտության կարգով հօգուտ «Ինեկոբանկ» ՓԲԸ բռնագանձել 48361,04 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից, 25.06.2015թ. կնքված թիվ 5.5788/FW5.162 ենթավարկային պայմանագրի մասով ընդամենը 45462,29 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից վարկի գումար՝ 40575,62 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, տոկոս՝ 3247,55 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, տույժ՝ 1639,12 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ:

14.04.2016թ. կնքված թիվ 5.6000/FW5.162 ենթավարկային պայմանագրի մասով ընդամենը՝ 2898,75 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, որից վարկի գումար՝ 2541,10 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, տոկոս՝ 203,90 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, տույժ՝ 153,75 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ, ինչպես նաև 436890 ՀՀ դրամ և 27859 ՀՀ դրամ՝ նախապես վճարված պետական տուրքի գումարները:

Միաժամանակ պատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել պարտքի մայր գումարի մնացորդի վրա հաշվարկված տոկոսների գումարները /14/տասնչորս/ տոկոս տոկոսադրույքով/ սկսած 03.06.2017թ. մինչև պայմանագրերի ժամկետի ավարտը, իսկ մինչև վարկային պայմանագրերի ժամկետի ավարտը պարտավորության փաստացի կատարման օրը, պատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել նաև հաշվեգրվելիք տույժերի գումարները /0,2 տոկոսի չափով յուրաքանչյուր կետանցի օրվա համար/, սկսած 03.06.2017թ. մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, որոնց նկատմամբ հաշվարկել և հօգուտ ՀՀ պետական բյուջեի պատասխանողներից համապարտության կարգով բռնագանձել 2%-ի չափով պետական տուրքի գումար: Բռնագանձումը տարածել գրավադրված գույքերի վրա:

Որպես կատարողական գործողությունների կատարման ծախս հօգուտ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության բռնագանձել վերոհիշյալ գործով հօգուտ պահանջատիրոջ պահանջի բավարարմանն ուղղված գումարի 5%-ի չափով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Սեդա Ռոբերտի Ղազարյանին և Սամվել Արմենակի Սերոբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գույքը

հ/հ	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	գույքի քանակը
1	Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոց, թիվ 51 հասցեում գտնվող բնակելի տուն և հողամաս Հողամասը. Կադաստրային համարը՝ 08001, Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, օգտագործման նպատակը՝ կառուց. և սպաս. համար, Հողամասի չափը (հա)՝ 0,023058 քմ, Իրավունքի տեսակը՝ ընդհանուր համատեղ սեփականության: Բնակելի տուն. Կադաստրային համարը՝ 08001, Նպատակային նշանակությունը՝ բնակելի, օգտագործման նպատակը՝ բն. տուն, Շենքի մակերեսը (քառ.մ.)՝ 114,50 քմ, կ/նկուղ-110,09 քմ, Իրավունքի տեսակը՝ ընդհանուր համատեղ սեփականության:	30320000 ՀՀ դրամ	22740000 ՀՀ դրամ	1

յացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր արումն ապահովող ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am միջոցով: րկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ **«06» 03. 2019թ**:

Որոշման պատճենը ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել այն ստանալու օրվանից տասնօրյա ժամկետում վերադասության կարգով կամ դատական կարգով:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրնքի 28 հոդվածի 5–րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները:

Ծ Ա Ն Ո Թ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխատանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքերով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում:

«Հրապարակային սակարկությունների մասին » ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4–րդ և 5–րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր հերթական աճուրդից հետո, լոտը / գույքը / չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունելու այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը:

Ավագ հարկադիր կատարող՝ Հ. Բադիշյան

ազգանուն

ստորագրություն